տու ծառոց պարտէզները՝ սպառել ջնջել հասունցած կեռասի պտուղները *»։ Ցիրուի Տարմահաւք՝ մարդուս փափուկ ականջը կը խայթեն իրենց ազատութեան մէջ, բայց երբ զանոնք բանտենք վանդակի մէջ. այն ատեն կ'ախորժիմք ամենայն սիրով ունկն դնել նոցա քաղցր երգոց. և որքան զարմացած կը մնանք, երբ անդէն իրենց եղջերեայ չրթունքներէն հնչեն մարդկային բարբառներ։

Տարմահաւը մեր երկրի ամենէն ծանօթ թռչունն կը համարուի, և գրեթէ առհասարակ ամէն գաւառաց մէջ կը գտնուի։

Նախիջեւանի ազատաբնակ Տարմահաւք երբ իրենց համարձակ ճռճռըններով կը խլացընեն մեր ականջը, անդին սիրելի և գեղանի Կարմրալանջն իւր անուշակ նուագներով կը փարատէ մեր ձանձրոյթը։ Արդեօք սիրոյ առծականը ձրիաբա՞ր կու տանք այս թռչնեկին, երբ կը տեսնեմք որ փոխանակ միւս թռչնոց նման մեզմէ հեռանալու, ընդ հակառակն նազելի կոտրուածքով մեզի կը մօտենայ, կարծես կը փափաքի որ զինքը շոյենք՝ համբուրենք. և ի՞նչպէս սիրոյ թռչուն չի կոչենք զայն։

Սա, երբ անձրևը մօտալուտ է, կը սլանայ կը թառի ամենաբարձր բարտիին գագաթը, և ճռուողելով կ'աւետէ մեզ անձրևի գալուստը։

Բայց հայրենիքնիս կարմրալանջի նման դեռ ուրիշ որքան երաժիշտ թռչնիկներ կը սնուցանէ. ո՞ր մէկը յիշենք, ո՞ր մէկը նկարագրենք, Ցախսարի՞կն թէ Պարիկը, Խաշնահա՞ւն թէ Ոսկեսարեակը, Արեղաձա՞գն թէ Կարմրալարը, Ծի՞տը կամ թէ Դեղձանիկը. բայց կ'անիրաւիմք եթէ պարզապար անուննին տալով, լռութեամբ խոյս տանք իրենցմէ։

Եռանդուն Ցախսարիկն անհանդարտ՝ շարունակ ճիւղէ ճիւղ կը ցատքէ, յափշտակելով պտղոց մնասակար որդերը։ Զի խրտեցընենք զինքը, ապա թէ ոչ ծառոց խոռոչներուն մէջ կը թաքչի։

Ցարաշարժ Պարիկն՝ միշտ պարելով, խայտալով չի յագենար անոյշ նշով և հատերով, և անդէն կատաղաբար կը հալածէ սիրուն և օգտակար մեղրակազմ միջատը։

— Ասոր ազգակիցն Խաշնահաւ՝ քան զայն աւելի վառվռուն, շարունակ կը ճօճէ իւր տուտն և խաչանց անմեղ խմբիկէն բնաւ չուզեր բաժնուիլ։

— Իսկ թզասէր կամ կեռասասէր Ոսկեսարեակն՝ կը շլացընէ մեր աչուըները իւր դեղին ծիրանի պխակախառն զգեստով, և կը պարարէ մեր ունկն՝ իւր ներդաշնակ բարձրաձայն երգերով։

Անդին Արեղաձագն կը սուլէ «Զիս մի՛ մոռնաք, ձեր հայրենեաց միակ հաւատարիմ թռչնիկն եմ ես, ի Կարին և ի Մուշ, ի Սեբաստիա և ի Բաղէշ, յԱրցախ և ի Սիւնիս, ամենուրեք ծանօթ եմ ես. թագաւոր օծուած եմ թռչնոց, զայս կը վկայեն ձեր մատենագիրք*. յուշիկ երգերովս գուշակ եմ գարնան, և զայս երգած են ձեր երգիչք**»։

Իսկ Կարմրալարն խոհեմութեամբ կը ճախրէ կ'անցնի մեր քովէն, և իւր պերճ երգերով՝ կարծես կ'ուզէ յայտնել՝ թէ հայրենեաց ամենէն գեղեցիկ թռչնիկներէն մին այլ ես եմ։

Ծիտ կամ հասարակ ճնճղուկն լաւագոյն էր որ բնաւ չի գտնուէր Հայ երկրին վրայ. դա մի փոքրիկ թռչուն է, բայց յարաժամ աւարառութեամբ հայ մշակին արմտեաց ամենէն աւելի մնասակար յափշտակիչն է. մի՞թէ լաւագոյն չէ՞ր որ ինչպէս առաջ, նաև արդ իսկ Աստղկան կառքը քաշելով և չաստուածներէն կերակրուելով՝ աղքատ մշակին արմտեաց պէտք չունենար։ Ո՛րքան տխմար է հեթանոսութիւնն որ այսպիսի վատ աւազակ թռչուն մը կը նուիրէ Արամազդածին դից։

— Ընդել՝ անմեղուկ՝ զուարթ թռչնիկ մը յանկարծ մեր միտքը չաստուածներէն վերցընելով՝ իրեն կը յափշտակէ.

— Դեղձանիկն է սա. յԵւրոպա ազնուականաց սենեկաց երաժիշտն է. բայց աստ հայրենեաց մէջ կը փափաքի ազատութեամբ զուարթացընել մայրիներու և սօսիներու խորհրդաւոր անտառները։

— Զի խռովենք զորա հրեշտակային զուարթութիւնը. իւր քաղցր նուագները՝ Սոխակի տարածական ձայնին և վսեմ ելևէջներուն հետ խառնելով, թող բարձրանան դէպ ի յերկինս իբր ալելուք Արարչին։

Դեղձանիկով կ'ուզենք փակել հայրենեաց օդաբնակ երաժշտաց խմբին նկարագրութիւնը. բայց մեր մտքէն դուրս մնացած երաժիշտ Սարիկն, ահա շունչը կտրած և բարկացած՝ մեր գլխին վրայ կը թռչտի, կարծես կը յանդիմանէ զմեզ՝ զինքը մոռնալնուս համար. և ի՞նչպէս չի մոռնանք այսպիսի աններդաշնակ և անխոհեմ երգիչ մը,

---

* Շանտր. Ընդ Հայաստան Ռուսիոյ։

* «Թռչունքն զԱրտաւտն (Արեղաձագ) օծին իւրեանց թագաւոր»։

** «Նման Արտաւտի՝ քաղցրաձայն հաւի՝ գարնան գուշակի». Գանձ։